

# Լ Օ Ր Ն Է Յ

(ՀԱՅՆԷԻՑ)



Ինչո՞ւ հոգիս այսպէս արտում ,  
Տխուր է ու թախծալի .  
Գլխիս միջին պտըաում է  
Մի հին գրոյց անցեալի :

Թարմ է օդը երեկոյեան ,  
Վազում է Րէյնն անբարբառ ,  
Եւ փայլում է ոսկեղօծւած՝  
Բարձր սարի վեհ կատար :

Ժայռի գլխին նստած է կոյս  
Ոսկեհանդերձ , աննման՝  
Եւ սանրում է դիտակները  
Ոսկեթել ու գիւթական :

Սանրում է նա ոսկէ սանրով  
Ու երգ ասում ներդաշնակ ,  
Եւ այն երգի մեղեդին է  
Դիւթի՛չ , զօրե՛ղ , անուշակ :

Երգիչն ահա նաւակի մէջ՝  
Վայրի վշտով պաշարւած ,  
Էլ չի տեսնում ժայռն ու քարը —  
Վեր է նայում հըմաքած :

Կը կըլանե՛ն ալիքները  
Լուղորդին ու նաւակը —  
Կը կորձանի՛ նոցա իսպառ  
Լօրեկէյի նըւագը :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ